

ՈՐՈՇՈՒՄ

ԵԹԿՊԻ-ի ռեկտորատի 2016թ. հունվարի 25-ի
նիստի /արձանագրություն N 8/

1. Առաջիկա օրերին սպասվող ջերմաստիճանի նվազման կապակցությամբ հանձնարարել ֆինանսատնտեսական աշխատանքների գծով պրոռեկտոր Վ. Եղիազարյանին ինստիտուտի ջեռուցման ջերմային ռեժիմը բարձրացնել:
2. Ինստիտուտի խորհրդի նիստի աշխատանքը նախապատրաստելու նպատակով հանձնարարել`
 - 2.1 պրոռեկտոր Ն. Սարգսյանին` նախապատրաստել օրակարգը և քննարկման ներկայացվող հարցերի ցանկը,
 - 2.2 պրոռեկտոր Վ. Եղիազարյանին` կազմակերպել տեխնիկական հարցերի ապահովումը,
 - 2.3 խորհրդի նիստի աշխատանքների նախապատրաստմանը մասնակից դարձնել նաև ուսխորհրդին:
3. Հանձնարարել Ն. Սարգսյանին, Հ. Ավագյանին, Վ. Եղիազարյանին և Է. Մանասերյանին ամփոփել ՀՀ ԿԳՆ ներքին աուդիտի գործողությունների ծրագրով նշված թերությունների շտկման ընթացքը:
4. Միջբուհական համագործակցության շրջանակներում Ա. Միցկևիչի անվան ինստիտուտից ստացած հրավերն ընդունել և վարպետության դասեր անցկացնելու նպատակով Լեհաստան գործուղել Թատրոնի ֆակուլտետի դեկան Է. Հեքեքյանին:
5. Ուսումնական գործընթացը դիդակտիկ նյութերով հարստացնելու նպատակով` հավանություն տալ Եղիշե Չարենցի անվան արվեստի և գրականության թանգարանի հետ համապատասխան պայմանագիր կնքելու առաջարկին:
6. Հանձնարարել ուսխորհրդին Կինոֆակուլտետի դեկան Ա. Երզնկյանի հետ համատեղ քննարկում կազմակերպել ինստիտուտում օնլայն հեռուստաալիք հիմնելու նպատակահարմարության վերաբերյալ:

Գիտքարտուղար

Գ. Հովհաննիսյան